




ՀԱՆԳԻՍ

Հ. ՀԱՄԱԶԱՍՊ Վ. ՈՍԿՅԱՆԻ

1 հունիսի 1895 — 25 փետրվարի 1968



Վիեննայից ստացված մահագրից խոր վշտով տեղեկացանք Վիեննայի Մխիթարյան միաբանության երևելի անդամ և հայ բանասիրության մեծանուն վաստակավոր դոկտ. Հ. Համազասպ Վ. Ոսկյանի մահվան գույժը: Այս օրերին, երբ պատրաստվում

էինք սույն էջերը տրամադրել նրա կողմից վերջին տարիների ընթացքում հայագիտությանը մատուցված ծառայություններին, ցավոք սրտի այժմ ստիպված ենք արձանագրելու միայն նրա անդարմանելի կորստյան և մեր մշակույթի նվիրյալների շարքում իր թողած մեծ բացի մասին:

Հ. Հ. Ոսկյանի մահը տեղի է ունեցել փետրվարի 25-ին երկամսյա ծանր հիվանդությունից հետո, իսկ հուղարկավորությունը՝ ամսի 29-ին Վիեննայի Կենտրոնական գերեզմանատանը:

Հ. Համազասպ Վ. Ոսկյանը ծնվել է 1895 թ. հունիսի 1-ին հարենի Խոտորչուրի Խանդաձոր թաղում: Նա հազիվ 12 տարեկան պատանի էր, երբ 1907 թ. գնաց սովորելու Վիեննայի Մխիթարյանների մոտ, ուր և 1913 թ. դարձավ նորընծա, 1914 թ. ուխտյալ և ի վերջո 1919 թ. ձեռնադրվեց քահանա: Ոսկյանը իր աշակերտական շրջանում թրքովել է Մխիթարյան միաբանության մեծանուն երախտավորների՝ Հ. Հակոբոս Տաշյանի և Հ. Ներսես Ակինյանի շնչով և իր բնածին ընդունակություններով և արտակարգ աշխատասիրությամբ դարձել նրանց ավանդույթների ժառանգորդը և ապա նրանց գործի արժանավոր շարունակողը: Հ. Հ. Ոսկյանը Վիեննայի համալսարանն ավարտելուց հետո 1922 թ. արժանացել է աստվածաբանության դոկտորի գիտական աստիճանին:

Ինչպես Վիեննայում, այնպես էլ Միաբանության սփյուռքահայ դպրոցներում Հ. Հ. Ոսկյանը ամենայն ձեռնհասությամբ ստանձնել է մի շարք վարչական և մանկավարժական պաշտոններ: Մինչև 1928 թ. նա կոն-

րանցի փոխ-վերակացուն էր: 1928—1931 թթ. պաշտոնավարել է Բուլղարիայի հայա-շատ Պլովդիվ քաղաքում իբրև Մխիթարյան վարժարանի ուսուցիչ, իսկ 1931—1937 թթ.՝ նույն վարժարանի տնօրեն: 1937 թ. ընտրվել է Ընդհ. վարչության անդամ և գործակալ Վիեննայում: Ապա անցնելով Տրիեստ, շուրջ մեկ և կես տարի զբաղվել է տեղվում Մխիթարյան վանատան և եկեղեցու վեր-ստացման և նորոգության հարցերով: 1947—1960 թթ. շարունակելով իր մանկավարժական քեղմնավոր գործունեությունը՝ Հ. Հ. Ոսկյանը Բելյուրում իբրև մեծավոր և տնօրեն Մխիթարյան վարժարանի՝ հայեցի ուսում է ջամբել հազարավոր հայորդիների: Դեռ ավելին. տեսնելով սփյուռքում մայրենի լեզվով գրված դասագրքերի պակասը, հա-կառակ իր բազմազբաղ վիճակին Հ. Հ. Ոսկյանը հեղինակել է հինգ հատորանոց «Ծո-ղակաթ» հայերեն ընթերցարանը և դարձյալ հինգ հատորանոց Հայոց պատմության դա-սագրքերը, որոնք ունեցել են մի քանի հրա-տարակություններ և նրանցով դաստիարակ-վել բազմաթիվ հայ մանուկների սերունդ-ներ: Դարձյալ այս ժամանակաշրջանում է, որ Հ. Հ. Ոսկյանը իր հեղինակած բազմաթիվ մանկա-պատանեկական գրքերով հարըս-տացրել է սփյուռքահայ գրականությունը և իր կարևոր նպաստի բաժինը բերել նոր սե-րունդին հայրենասիրության, բարոյախոսու-թյան, առողջապահության, կարգապահու-թյան և այլ հարակից խնդիրներին հաղոր-դակից դարձնելու և նրանց դաստիարակելու գործում:

Սկսած դեռևս 1920-ական թվականներից, երբ ինք ղեկ շատ երիտասարդ էր, և ապա Հ. Ն. Ալիևյանի բազակալության շրջանում (1937 թ.) և ի վերջո 1960 թվականից մինչև իր վերջին շունչը Հ. Հ. Ոսկյանը շարունակել է մնալ հայագիտության մեջ նշանակալից դեր խաղացած «Հանդէս ամսօրեայ» պար-բերականի խմբագրապետն ու նրա մնացուն և հիմնական աշխատակիցը: Նա բազմաթիվ հոդվածներ է գրել նաև սփյուռքահայ մի շարք պարբերականների, այդ թվում «Ու-սումնարան», «Աւետիք», «Մասիս» և այլ թերթերին և հանդեսներին:

Հ. Համազասպ Ոսկյանը իր վերոհիշյալ բազմազան և բեղմնավոր գործունեությու-նից բացի շուրջ կես դար, այսինքն իր բո-վանդակ ստեղծագործական կյանքը, նվիրեց հայագիտության զարգացման ազնիվ գոր-ծին: Իր նշանավոր նախորդների՝ Տաշյանի ու Ալիևյանի մահից հետո, Ոսկյանը իր ամ-բողջ էությունը շարունակեց անձնավորել Վիեննայի Մխիթարյան միաբանության շրջանակից ներս զարգացող հայագիտու-թյան գործը և իր արժանի տեղը գրավեց

նորագույն շրջանի հայ մշակույթի պատմու-թյան մեջ:

Հ. Հ. Ոսկյանը ժամանակակից հայ ձեռա-գրագիտության մեծագույն ներկայացուցիչ-ներից մեկն էր: Իր գիտական գործունեու-թյան սկզբնական օրերից մինչև իր կյանքի վերջին շրջանը նա բացառիկ՝ նվիրվածու-թյամբ ձեռնամուխ է եղել դեռևս հայագի-տությանը անհայտ մնացած գրչագրերի հայտնաբերման, ուսումնասիրման և հրա-տարակման գործին: Սկսած Ավստրիայի տարբեր քաղաքներից մինչև Կ. Պոլսի ազ-գային և պետական հիմնարկությունները, Թեհրանից մինչև Չեխոսլովակիա և վերջա-պես Բուլղարիայից մինչև Լիբանան ցրված մեր ձեռագիր գանձերը եթե ճանաչելի դար-ձան հայ բանասիրությանը, ապա այդ բոլոր պարտական ենք Հ. Հ. Ոսկյանի բացառիկ եռանդին և ժրջան պրպտումներին: Սա-կայն այս ապարեզում նրա աշխատանքնե-րի թագն ու պսակը հանդիսացավ նրա եր-կար տարիների տքնաջան գործունեության արգասիքը եղող «Ցուցակ հայերեն ձեռա-գրաց Մխիթարյան Մատենադարանին ի Վիեննա» խորագիրը կրող հոյակապ հա-տորը: Թեև հիշյալ հատորի առաջին ձեռա-գրի նկարագրությունը մասամբ կատարել էր իր մեծ ուսուցիչը և հայրենակիցը՝ Հ. Հ. Տաշյանը, այնուամենայնիվ վերջինս իր ա-ռողջության վատթարացման հետևանքով այդ գործի կատարումը կտակել էր իր աշա-կերտին: Եվ այսպես դեռևս 40 տարի առաջ իր երիտասարդական տարիներին Հ. Հ. Ոսկյանը Տաշյանական ոճով գրեթե մեծ մասամբ ավարտել, իսկ իր վերջին տարի-ներին ամբողջացրել էր այն, սակայն հրա-տարակչական միջոցներից զուրկ լինելով միայն 1963 թ. շնորհիվ Կյուլպենկյան հիմ-նարկության հնարավոր եղավ հրատարակել այդ գործը: Ծուրջ 1160 մեծադիր էջեր բո-վանդակող այդ պատկառելի հատորում նա իւր հմտությամբ և մեծ քաղաքականությամբ իբրև Տաշյան ձեռագրագրության անմիջական շարունակություն, իբրև Բ. հատոր, ստեղծեց իրը, որը գիտությանը արդեն հալոնի դար-ձավ Ոսկյան ձեռագրագրության անունով, և ուր գիտական նկարագրության ենթարկեց 574—1304 համարները կրող ձեռագրերը. այսինքն 730 ձեռագրեր: Բավական է նշել, որ ներկայումս Վիեննայի Մխիթարյան Մա-տենադարանը մեր ձեռագրական ամենամեծ գանձարանների թվում առաջինն է, որ հա-յագիտությանը ամենալին մանրամասնու-թյամբ ճանաչելի է դարձրել իր գրչագրական բովանդակ հարստության հետ և այդ շնոր-հիվ Հ. Հ. Ոսկյանի հիշյալ հոյակապ աշխա-տության:

Հ. Հ. Ոսկյանի կողմից կատարված ձեռա-

գրագիտական մաշեցնող աշխատանքները կարևոր նշանակություն ունեցան հետագայում հեղինակի կողմից պատմա-քանասիրական, մատենագրական և այլ բնույթի արժեքավոր ուսումնասիրություններ ստեղծելու գործում:

Նրա երկար տարիների աշխատանքի արդյունքը եղող հայագիտական երկասիրությունների գլուխ-գործոցը հանդիսացավ անկասկած հայ վանքերի պատմությանը նվիրած նրա տասը հատորանոց մեծարժեք աշխատությունը, որը ընդգրկում է շուրջ 3000 էջ և միջնադարյան մեր մշակույթի լուսատու միջնաբերդերի պատմությանը ընծայված ամենակատարյալ և լավագույն աշխատությունն է: Ուսումնասիրողը այդ հատորներում կգտնի Վապուրականի—Վանի, Տարոնի—Տուրուբերանի, Մեքաստիաի, Բարձր Հայքի, Արցախի, Կիլիկիայի, Գուգարքի, Խարբերդի, Տիարպեթիի, Տրապիզոնի և այլ նահանգների ու գավառների հայկական վանքերի պատմության շարադրումը: Պետք է նշել, որ այդ վանքերից շատերի հետքը այժմ իսպառ ջնջվել է պատմության ասպարեզից, և նրանց երբեմնի շենչող կյանքի պատկերն ենք տեսնում մի պահ հառնա՞ դարավոր մոխիրների միջից՝ Հ. Հ. Ոսկյանի բեղմնավոր գրչին պատկանող հիշյալ հատորների էջերում:

Հ. Հ. Ոսկյանը իր ուսումնասիրությունների ընթացքում գիտական հետազոտման է ենթարկել մեր միջնադարյան բազմաթիվ մատենագիրների կյանքն ու ստեղծագործությունը և այս առթիվ կատարել է նաև մինչ այդ չլուծված մի շարք կարևոր հարցերի ճշգրտումներ: Նա ուսումնասիրություններ է նվիրել Հովհաննես Վանականին և նրա դպրոցին, Մխիթար Գոշին, Վարդան Արեւելցուն, Կիրակոս Գանձակեցուն, Մաղաքիա Աբեղային, Հակոբ Կարնեցուն, Մատթեոս Ջուղայեցուն, Ստեփանոս Ռոշքային և այլոց:

Բազմավաստակ գիտնականը իր շնորհակալ աշխատանքն է մատուցել նաև հայ պատմագիտությանը, ուրվագծելով Գևորգյաց, Ռշտունյաց, Դիմաքայանց, Անձնացյաց, Ամատունյաց և այլ հայ նախարարական տների պատմությունը:

Հ. Հ. Ոսկյանը իր ավանդն է մուծել հայերեն ընկալների հրատարակման և ուսումնասիրման գործում: Այդպիսիք են նրա «Երգերգոցի առաջին և երկրորդ թարգմանությունը», «Մարդիկեի ժողովքի հայերեն կանոնները», Ներսես Լամբրոնացու մի շարք ներքողների և ճառերի հրատարակումը, և այլն:

Հայ գաղթավայրերի պատմության ուսումնասիրման ասպարեզում ևս Հ. Հ. Ոսկյանը

կարևոր ծառայություններ է մատուցել: Այս առումով բացառիկ արժեք են ներկայացնում նրա կողմից կատարված բնագրային այն ուսումնասիրություններն ու հրատարակությունները, որոնք վերաբերում են Լեհաստանի, Տրիեստի, Հունգարիայի և մասամբ Տրանսիլվանիայի հայկական գաղթավայրերի պատմությանը:

Հայ միջնադարյան գրականության ուսումնասիրման հարցերը ևս դուրս չեն մնացել անխնայ գիտնականի տեսադաշտից: Բավական է հիշել նրա «Չորս հայ տաղասացներ և անոնց տաղերը» ամենավերջին աշխատության մասին, որ նա բանասիրությանը մեծ մասամբ, առաջին անգամ լիելով, ճանաչելի է դարձրել Հովհաննես Կարնեցու, Գրիգոր Օջականցու, Մովսես դպիր Կարնեցու և Մարտիրոս վ. Ղրիմեցու մի շարք ստեղծագործություններին:

Հակառակ իր առաջացած տարիքին և վատառողջ վիճակին պետք է սքանչացումով արձանագրել այն իրողությունը, որ Հ. Հ. Ոսկյանի ամենավերջին տարիները նրա հայագիտական գործունեության ամենաբեղմնավոր շրջանը հանդիսացան: Բժշկները նրան բազմիցս հանձնարարել էին որոշ ժամանակ հանգիստ մնալ: Սակայն ի՞նչպես կարող էր նրա նման ժրջան մշակը անգործության մատնվել: Այո՛, հաճախ էր, որ նա իր ճամփաներում զանգատվում էր առողջական իր վիճակից, սակայն նա վրձնել էր անդադրում ստեղծագործել իր սիրելի ժողովրդի մշակույթի հարստացման համար: Նա պլյալացող մոմի նման հատնում էր շիթ առ շիթ, սակայն ոգի ի բռին շարունակում էր յուսավորել իր շուրջը...

Եվ այսպես ի գարմանս բոլորին 1963 թ. իր տիտանական աշխատանքի արդյունքը եղող իր վիթխարի ձեռագրացուցակի հրատարակումից քիչ հետո «հանգստացող» գիտնականը մեկը մյուսի հետևից լույս էր ընծայում Ստեփանոս Ռոշքայի «Ժամանակագրություն»-ը (1964), Հովհաննես Ղրիմեցու «Պատմություն հոշակատու վանից Հաղբատայ Ս. Նշանին» (1965), «Չորս հայ տաղասացներ և անոնց տաղերը» (1966), ղրկտ. Զ. Օբերտինսկու «Լեհահայերը և անոնց Անդրեաս արքեպիսկոպոս Եազովիցի մեջ» գերմաներենից կատարած իր ընդարձակ թարգմանությունը, ծանոթագրություններով հանդերձ: Դեռ չենք նշում իր խմբագրապետությամբ լույս տեսնող «Հանդես ամսօրեայ» պարբերականում ստանձնած իր խմբագրական աշխատանքների և իր բերած բեղմնավոր աշխատակցության մասին: Դարձյալ իր ջանքերով էր, որ այս շրջանին նա խմբագրեց, առաջաբան գրեց ու հրատարակեց իր սիրելի ծննդավայրի՝

խոտորջորի հուշամատյանը, գրված երկու հանգուցյալ Մխիթարյանների՝ Հ. Հարություն և Հ. Հուրումյանի և Հ. Մատթեոս և Հ. Հանյանի կողմից (1964), և որը երկար տարիներ շարունակում էր անտիպ մնալ:

Հ. Հ. Ոսկյանը ինչքան խառնաբանաց էր իր նկատմամբ, նույնքան ավելի ներողամիտ և քաջալերող էր ուրիշների աշխատանքի վերաբերյալ: Լավագույն ապացույցը այդ մասին հանդիսանում են իր կողմից «Հանդես ամսօրեայ»-ում տարիներ շարունակ հրատարակված շուրջ չորս տասնյակի հասնող այն գրախոսությունները, որոնք նվիրված են սփյուռքում և Մայր Հայրենիքում լույս տեսած հայագիտական գրքերին: Նա իր յուրաքանչյուր գրախոսության մեջ ի՞նչպիսի ջերմ սիրտ ու զգացմունք և խոր հրմտություն է դրսևորել և գիտական նորանոր սխարանների է կոչել հեղինակներին:

Հայ բանասիրության համար ի՞նչպիսի սքանչելի ծրագրեր դեռևս նա ուներ իրագործելի... Նրա ձեռագիր ու անավարտ գործերի մեջ է գտնվում «Կանոնագիրք Հայոց»-ի համեմատական բնագիրն ու լատիներեն թարգմանությունը, «Վիեննայի Մխիթարեաններու Տրիեստի մէջ հրատարակած հայերէն ու հայատառ թրքերէն գրքերը» մատենագիտական հոդվածաշարի շարունակությունը, «Հանդես ամսօրեայ»-ում անցյալում լույս տեսած ձեռագրացուցակների մի հատորը և այլն և այլն: Այս բոլորը անշուշտ լույս կտեսնեն «Հանդես ամսօրեայ»-ի էջերում և առանձին գրքերով Միաբանության իր սիրելի գրչակից եղբայրների անմիջական հսկողությամբ:

1965 թ. էր, երբ Ամենայն Հայոց կաթողիկոսության պաշտոնաթերթ «Էջմիածին» հանդեսի խմբագրությունը դիմելով նրան ցանկացել էր, որպեսզի Հ. Հ. Ոսկյանը բերի իր աշխատակցությունը: Սակայն հակառակ իր բոլոր քաղաքական նրա հետգհետե քայքայվող առողջությունը պատճառ եղավ, որ բազմաբեղուն գիտնականը խորին ախտաանքով հրաժարվի իր ցանկությունից: Նա իր վերջին նամակներից մեկում մեծ ցավով գրում էր, որ «ժստատացած էի «Էջմիածին» ամսագրին հոդված հասցնել գոնե մեկ երկու հատ, քայք կերևա պիտի չկարենամ, զի բժիշկները հանգիստ կը պարտադրեն»:

Հայրենասեր գիտնականը մինչև իր կրանքի վերջին օրերը սերտ կապի մեջ էր գտնվում Հայաստանի հայագիտական մի շարք հիմնարկությունների, այդ թվում. Մարտոցյան Մատենադարանի, Հայաստանի գիտությունների ակադեմիայի, և Մյանհիլյանի անվան հանրային գրադարանի և առանձին բազմաթիվ հայագետների հետ: Հ. Հ. Ոսկյանը թեև միշտ քաղաքացի և հաճախ հի-

վանդ, ամենացն ազնվությամբ միշտ պատուստ էր իր խորհուրդներով օգնելու իրեն դիմող առհասարակ բոլորին: Նա իր ցուցաբերած օգնությամբ ոգևորում էր իրեն դիմողներին, իսկ ինքն էլ իր հերթին ոգևորվում և լիցքավորվում էր նրանց աշխատանքներով: Իր նամակներից մեկում Ոսկյանը նշելուց հետո իր քաղաքացիական մասին, կանգ էր առնում «Հանդես ամսօրեայ»-ում ցրված ձեռագրացուցակները մի հատորում ամփոփելու իր աշխատանքներին և ապա ավելացնում. «Բայց գործը դանդաղ կրկնանայ, զի ուրիշ աշխատանքներ ալ կան և նորեր միշտ սունկի պես երևան կուգան և արգելք կ'ըլլան այս կամ այն ձևով, մանաւանդ ստիպում են ստեղծ բանասիրական հարցումներու եղած օտար երկիրներէ պատասխանելու: Սակայն սիրով կ'ընեն, զի հայ գրի ու մշակոյթի համար է»:

Իր հիվանդության օրերին հայ մշակույթին օգտակար չլինելը մեծագույն վիշտն էր նրա համար: Իր ամենավերջին նամակում, գրված իր վախճանից մի քանի օր առաջ, նշելով վիրահատության ենթարկվելու նպատակով հիվանդանոց տեղափոխվելու մասին, մեծ ցավ էր հայտնում, որ որոշ ժամանակ ինք գրվելու է իր սիրելի Հայրենիքի գիտական աշխատողներին օգտակար լինելու պատենությունից...: Սակայն ի՞նչ իմանար սկանավոր հայագետը, որ իր կարծած այդ որոշ ժամանակը, հազիվ մի քանի օր անց ավա՞ղ ինչպիսի տխուր վախճան էր բերելու իր կյանքին և նա բնոմիշտ քաժանվելու էր իր բոլոր սիրելիներից...

Նրա ամենավերջին քաղաքացի էր որքան կարելի է շուտ այցելել Մայր Հայրենիք և մոտիկից հաղորդակից լինել նրա ծաղկմանը և հայագիտության զարգացմանը: Նա հավատացած էր որ հայրենի բնությունը իր խոնջած մարմնին նոր կյանք է պարգևելու: Հ. Հ. Ոսկյանը խոսելով իր օղակոխության գնալու մասին, դարձյալ գրում էր. «Հայաստանի արևն ու ջուրը թերևս ավելի պիտի նպաստէին, և արկա օր մըն ալ տեղի կ'ունենայ...» և դարձյալ նա հավատացած էր, որ ինք ևս պիտի կարողանա «օր մըն ալ ազատ հայրենիքի օդը շնչել...»: Սակայն վրա հասնող անսպասելի մահը վերջ տվեց ամեն ինչի:

Ոչ ևս է ազնվաշուն անձնավորությունն ու անխնայ գիտնականը: Հ. Հ. Ոսկյանի մահը ոչ միայն անփոխարինելի կորուստ է Վիեննայի Մխիթարյան միաբանության համար, այլ նաև հատկապես հայագիտության համար: Դադարեց շարախելու հայ բանասիրության հավատարիմ, զգայուն, քաղաքական և ծրագրական գիտնականի սիրտը: Հողին հանձնելով նրա անընչացած մարմին-

նը, կորցրինք հայագիտության ավագագույն սերնդի ամենավերջին երախտավորներից մեկին:

Հ. Հ. Ոսկյանի թողած գիտական հարուստ ժառանգությունը իբրև նրա հիշատակը անթառամ պահող հավերժական հուշարձան՝ մենք հարգանքով կհիշվի և խրքին երախտագիտությամբ կուսումնասիրվի ներկա և ապագա հայագետների սերունդների կողմից: Հավերժ հարգանք նրա պայծառ հիշատակին:

ՄԱՍԵՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Հ. ՀԱՄԱԶԱՍԴ ՈՍԿՅԱՆԻ ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ԱԾԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ*

Ա. Գ Ր Զ Ե Ր

- 1.—Յովհաննես Վանական և իր դպրոցը, Վիեննա, 1922, Զ+122 էջ (Ազգային Մատենադարան ԴԳ):
- 2.—Երգ երգոցի առաջին և երկրորդ թարգմանությունը. Ուսումնասիրություն և քննադիր, Վիեննա, 1924, 80 էջ (Ազգային Մատենադարան ԾԷ):
- 3.—Մատենագրական քննություններ: 1. Յովհաննես Սարկյալագ. 2. Ներսէս Լամբրոնացու Ներբողեանի վերափոխումն Աստուածածնի. 3. Մխիթար Գօշ, Վիեննա, 1926, Զ+192 (Ազգային Մատենադարան ԾԺԲ):
- 4.—Եղիա Աստուածատուրեան—Մուշեղեան և իր գրական արտադրությունները, Վիեննա, 1927, 90 էջ (Ազգային Մատենադարան ԾԺԷ):
- 5.—Վասպուրականի-Վանի վանքերը. Ա. մաս. 1. Բզնունեաց ծովի կղզիներու ամապատներն ու վանքերը: 2. Ռշտունեաց վանքերը: 3. Վան-Տոսայի վանքերը: Գնունեաց և Արքերանիի վանքերը, Վիեննա, 1940, Ը+324 էջ (Ազգային Մատենադարան ԾԽԹ):
- 6.—Վասպուրականի-Վանի վանքերը, Բ. մաս. 5. Արճիշահովտի, Քաջբերունեաց և Արծկի վանքերը: 6. Արտագի վանքը: 7. Նախճատանի վանքերը: 8. Մաղարդայ Նախավկայի վանքին կոնդակները: 9. Գողթնի վանքերը, Վիեննա, 1942,

* Սույն մատենագիտությունը կազմելու ժամանակ նկատի ենք ունեցել Վիեննայի Մխիթարյան միաբանության «Ազգային Մատենադարան» մատենաշարում լույս տեսած Հ. Հ. Ոսկյանի առանձին գրքերը, ինչպես նաև «Հանդես ամսօրեաց»-ում 1919 թվականից մինչև 1967 թվականի առաջված վերջին 7—9 համարում նրա կողմից հրատարակված բոլոր հոդվածները և ուսումնասիրությունները, ձեռագրացույցակները, գրախոսությունները, մահախոսականները և թարգմանությունները: Մատենագիտությունը դասավորված է ժամանակագրական կարգով: 26-ն ընդված ոչ հայագիտական գործերը (դասագրքերն ու այլ բնույթի գրքերը) և ակտուալ հայ մամուլում նրա կողմից ցանցված հոդվածները:

Ը+385—742 էջ (Ազգային Մատենադարան ԾՄԱ):

- 7.—Վասպուրականի-Վանի վանքերը, Գ. մաս. 10. Անձնացեաց, Բոթուհիքի և Երուանդունիքի վանքերը: 11. Այրբակի վանքերը: 12. Մոկաց, Խիզանի և Ծատակի վանքերը: 13. Սպնաձոր-Բաղէշի վանքերը: 14. Վասպուրական-Վանի վանքերու մասին ընդհանուր՝ զանազան տեղեկություններ, Վիեննա, 1947, ԺԵ+743—1130 էջ (Ազգային Մատենադարան ԾՄԵ):
- 8.—Սարդիկէի ժողովքի հայերէն կանոնները, քննադիր և ուսումնասիրություն, Վիեննա, 1945, Ը+132 էջ (Ազգային Մատենադարան ԾՄԳ):
- 9.—Սեբաստիայի վանքերը, Ա. մաս. Սեբաստիա քաղաքի վանքերը, Վիեննա, 1946, ԺԱ+79 էջ (Ազգային Մատենադարան ԾՄԻ):
10. Կարին և Կարնեցին և Կարնոյ վանքերը (պատկերազարդ), երկու դասախօսություն: Հրատարակություն Կարնոյ հայրենակցական միության կիսամյակի վարչության, Վիեննա, 1950, 56 էջ:
- 11.—Բարձր Հայքի վանքերը, Վիեննա, 1951, ԺԲ+232 էջ (Ազգային Մատենադարան ԾԿԷ):
- 12.—Գնունեաց և Ռշտունեաց նախարարությունները, Վիեննա, 1952, Ը+156 էջ (Ազգային Մատենադարան ԾՀԱ):
- 13.—Տաթև-Տուրքերանի վանքերը, Վիեննա, 1953, Ը+271 էջ (Ազգային Մատենադարան ԾՀԴ):
- 14.—Արցախի վանքերը, Վիեննա, 1953, Է+256 էջ (Ազգային Մատենադարան ԾՀԷ):
- 15.—Ուսումնասիրություններ Հայ նախարարություններու մասին. Ա. Խորխոռունիք, Դիմաքսանք, Ակեացիք, Անձնացիք և Ամատունիք, Վիեննա, 1955, 120 էջ (Ազգային Մատենադարան ԾՀԸ):
- 16.—Կրիկիայի վանքերը, Վիեննա, 1957, Ը+320 էջ (Ազգային Մատենադարան ԾԶԳ):
- 17.—Գուգարքի վանքերը, Վիեննա, 1960, Ը+368 էջ (Ազգային Մատենադարան ԾԶԸ):
- 18.—Սեբաստիայի, Խարբերդի, Տիարպեքիի և Տրապիզոնի նահանգներու վանքերը, Վիեննա, 1962, Ը+282 էջ (Ազգային Մատենադարան ԾԴԳ):
- 19.—Ցուցակ հայերէն ձեռագրաց Մխիթարեան Մատենադարանին ի Վիեննա, հատոր Բ, Վիեննա, 1963, Ը+1156 էջ (Հայկական մատենաշար Գալուստ Կիլիկյանի հիմնարկության):
- 20.—Լեհաստանի և անոնց Անդրեաս արքեպիսկոպոսը Երզրովիցի մէջ, գրեց դոկտ. Զ. Օրերտինակի (թարգմանություն Հ. Համազասպ Ոսկյանի), Վիեննա, 1963:
- 21.—Մոնեխանուի Ռօշքայ ժամանակագրություն կամ Տարեկանք եկեղեցականք, Վիեննա, 1964, Ը+231 էջ (Հայկական մատենաշար Գալուստ Կիլիկյանի հիմնարկության):
- 22.—Յովհաննու Լիմեցոյ Պատմություն հոշակաւոր վանից Հաղբատայ Ա. Նշանին, Վիեննա, 1965, ԺԴ+184:
- 23.—Չորս հայ տաղասացներ և անոնց տաղերը. Յովհաննես Կարնեցի, Գրիգոր արքեպ. Օշա-

կանցի, Մովսես դպիր Կարնեցի և Մարտիրոս վ. Ղրիմեցի, Վիեննա, 1966, Զ+210 էջ (Ազգային Մատենադարան Մ.):

Բ. — Պատմա-բանասիրական հոդվածներ — ուսումնասիրություններ

- 24.—Յովհաննէս Վանական վարդապետ, «Հանդէս ամսօրեայ», Վիեննա, 1921, էջ 41—52, 163—172:
- 25.—Վարդան Արևելցի, 1921, էջ 364—374, 458—471, 564—573:
- 26.—Վիրապոս Գանձակեցի, 1922, էջ 89—94 և 214—222:
- 27.—Մաղաքիա արևդայի Պատմություն վասն ազգին Նետողաց, 1922, էջ 221—226:
- 28.—Երզ երգոցի առաջին և երկրորդ թարգմանությունը: 1924, էջ 215—233, 297—311, 409—418:
- 29.—Յովհաննէս Սարկաւագի կեանքը, 1925, էջ 27—40:
- 30.—Յովհաննէս Սարկաւագի գրությունները, 1925, էջ 117—125 և 233—248:
- 31.—Ներսէսի Լամբրոնացու Ներքողանքի վերափոխումն Աստուածանի, 1925, էջ 355—366 և 442—462:
- 32.—Մխիթար Գօշ, 1925, էջ 548—561, 1926, էջ 25—35 և 129—137:
- 33.—Ապրույ Զէլէպի տոմսածառը, 1926, էջ 415:
- 34.—Նիկիա Ա. Մուշեղեան Աստուածատուրեան և իր գրական արտադրությունը, 1927, էջ 28—36, 126—138, 237—249, 367—376, 493—501:
- 35.—Ներսէսի Լամբրոնացու ճառ յամառակ որդիին (ուսումնասիրություն և բնագիր), 1928, էջ 120—135 և 311—319:
- 36.—Լիմ անապատը, 1938, էջ 347—375:
- 37.—Բզմունեաց ծովի կղզիներու անապատներն ու վանքերը, 1939, էջ 25—77:
- 38.—Ներսէսի Տարսուհի եպիսկոպոսի Ի բան տընտեսին (Բնագրի հրատարակում), 1939, էջ 90—102:
- 39.—Թուանգ գիւղի Գանձկալ Ա. Գեորգ եկեղեցին, 1939, էջ 196—201:
- 40.—Ռշտունեաց գաւառի վանքերը, 1939, էջ 159—195, 1940, էջ 21—37:
- 41.—Վան-Տոսայի վանքերը, 1940, էջ 88—75, 164—192:
- 42.—Գնունեաց և Առքերանիի վանքերը, 1940, էջ 192—213:
- 43.—Ներսէսի Լամբրոնացու Վարք Գրիգորի Նարեկացու (ուսումնասիրություն և բնագիր), 1940, էջ 214—220:
- 44.—Արտագի վանքը, 1941, էջ 33—58:
- 45.—Արմիշառուի, Քաջբերունեաց և Արծկէի վանքերը, 1941, էջ 59—99:

- 46.—Նախնաւանի վանքերը, 1941, էջ 179—219:
- 47.—Մաղարդալ Նախավայի վանքին կոնդակները, 1941, էջ 228—243 և 1942, էջ 83—128:
- 48.—Գողթնի վանքերը, 1942, էջ 23—61:
- 49.—Անձնացեաց, Բողոմիքի, Երուանդունիքի և Աղբակի վանքերը, 1942, էջ 161—198:
- 50.—Ապրիկէի ժողովքի հայերէն կանոնները (ուսումնասիրություն և համախառն գիտական բնագիր) 1942, էջ 203—240, 1943, էջ 1—22, 1945, էջ 71—86:
- 51.—Մոկաց, Խիզանի և Ծատախի վանքերը, 1943, էջ 60—96, 1944, էջ 56—67:
- 52.—Սալմաձոր-Բաղէշի վանքերը, 1944, էջ 68—96:
- 53.—Սերաստիայի վանքերը, 1945, էջ 21—67:
- 54.—Վատարականի-Վանի վանքերու մասին ընդհանուր՝ զանազան տեղեկություններ, 1946, էջ 70—94, 1947, էջ 25—36, 77—97, 159—170, 219—230, 282—289, 329—347:
- 55.—Տրիեստի մէջ թաղուած հայ եկեղեցականներ, 1948, էջ 404—420:
- 56.—Բարձր Հայքի վանքերը.—Դարանաղիք, 1948, էջ 528—558, Եկեղեցը, 1949, էջ 22—44, Կարմուշ և Դերջանի, 1950, էջ 38—51, 147—174, Սպերի, Բաբերդի և Թորթումի, 1950, էջ 343—367: Յաւկում. Քղիի և Խնուսի վանքերը, էջ 433—442:
- 57.—Գնունեաց նախարարությունը, 1951, էջ 481—496, 1952, էջ 66—80:
- 58.—Արցախի վանքերը, 1951, էջ 339—367, 521—537, 1952, էջ 80—90, 213—242, 415—427, 546—574, 1953, էջ 33—52:
- 59.—Ռշտունեաց նախարարությունը, 1952, էջ 161—187 և 371—404:
- 60.—Ակեացուց, Անձնացեաց և Դիմաքսեան նախարարությունները, 1954, էջ 295—333:
- 61.—Ամատունեաց նախարարությունը, 1954, էջ 497—521:
- 62.—Սկտայի վանքերը, 1954, էջ 79—85, 1955, էջ 17—42, 205—236:
- 63.—Կիլիկիայի վանքերը 1955, էջ 373—397, 505—525, 1956, էջ 26—45, 373—397, 505—525, 1956, էջ 26—45, 163—195, 320—335, 452—467:
- 64.—Գուգարքի վանքերը, 1957, էջ 13—25, 185—192, 292—307:
- 65.—Նանախիւնի վանքը, 1957, էջ 407—420:
- 66.—Սանահին և Հաղբատ վանքերու հիմնարկությունները և ընդհանուր տեղեկություններ անոնց մասին, 1958, էջ 265—313, 475—492:
- 67.—Հաղբատի կալուածները: Սանահինի և Հաղբատի արձանագրությունները, 1959, էջ 361—382:
- 68.—Հաղբատի առաջնորդները, 1959, էջ 31—79:
- 68.—Հաղբատի դպրոցը, 1959, էջ 183—197:
- 69.—Սեբաստիոյ նահանգին վանքերը, 1959, էջ 481—500, 1960, էջ 1—15:
- 70.—Խարբերդի գաւառի վանքերը, 1960, էջ 177—204, 360—380 և 492—506:
- 71.—Տիարպեթիի կամ Տիգրանակերտի նահանգին վանքերը, 1961, էջ 39—71:

* Հ. Հ. Ոսկանի հետագա բոլոր հոդվածները լույս են տեսել «Հանդէս ամսօրեայ»-ում, կրկնությունից խուսափելու համար այլևս չենք նշում այդ պարբերականի անունը:

- 72.—Տրապիզոնի նախնական վանքերը, 1961, էջ 278—281:
 73.—Յովհաննէս Կարնեցի, 1968, էջ 339—358, 489—506:
 74.—Գրիգոր արքեպ. Օշականցի, 1864, էջ 7—23, 141—154 և 311—322:
 75.—Մովսէս դպիր Կարնեցի, 1964, էջ 457—478:
 76.—Կարգ և թիւ թագաւորացն Հայոց ի Մարտիրոս վարդապետէ Գրիմեցոյ, 1965, էջ 31—50:
 77.—Մտեհանոս վարդապետ Ռօշբայ, 1965, էջ 187—206, 335—346, 457—466, 1966, էջ 29—44 և 139—150:
 78.—Մատթէոս վ. Զուղայեցի, 1966, էջ 275—290, 461—468, 1967, էջ 15—28, 129—142:
 79.—Ներսէս վ. Երեւանցի և Բուդապէստի ազատագրումի համար գրուած հայերէն ծածկագիր նամակները, 1967, էջ 257—282:
 80.—Յակոբ Կարնեցի երեցի կեանքի մասին՝ լրացուցիչ տեղեկութիւններ և գրութիւններու նկատմամբ ճշդումներ, 1967, էջ 283—288:
 81.—Վիեն. Մխիթարեաններու Տրիեստի մէջ հրատարակած հայերէն ու հայատառ թրքերէն զըրքերը, 1967, էջ 225—244, 289—312 (շարունակելի):

Գ. Զեռագրացուցակներ

- 82.—Օլմիցի քաղաքական գրատուն հայերէն երկու ձեռագիրները, 1924, էջ 510—513:
 83.—Կանոնագրոց ձեռագիր օրինակ մը ի Պոլսի, 1936, էջ 196—200:
 84.—Յուցակ Հայերէն ձեռագրաց ի Բուզարիա, 1937, էջ 570—580, 1938, էջ 109—115, 204—218 (այս վերջինը՝ Ն. Գասապյանի հետ):
 85.—Յուցակ Հայերէն ձեռագրաց Մատենադարանին Մխիթարեանց ի Վիեննա: 1945, էջ 101—116:
 86.—Երկու հայերէն գրչագիր Աւետարան Զաֆէի մէջ, 1951, էջ 65—69:
 87.—Սմբատ Քաշկունցի Աւետարանը, 1951, էջ 463—467:
 88.—Յուցակ Թեոֆանի հայերէն ձեռագիրներու, 1953, էջ 95—110 և 596—604:
 89.—Հայերէն երեք նոր ձեռագիր Բեյրութի մէջ, 1959, էջ 413—420:
 90.—Ն. Պողոսեանի պատմագիրք հայոց ձեռագիրը, 1960, էջ 75—81:
 91.—Վեդարատր հայերու Բեյրութի վանքին ձեռագիրները, 1960, էջ 550—567:
 92.—Հայերէն ձեռագիր Աւետարան մը Koblenz-ի մէջ: 1965, էջ 73—78:
 93.—Հայերէն խորհրդատետրի լատիներէն թարգմանութեամբ ձեռագիր մը Göttweig-ի վանքին մէջ, 1965, էջ 77—82:
 94.—Հայերէն ձեռագիր Աւետարան մը Admont-ի վանքին մէջ, 1964, էջ 159—166:
 95.—Գրացի համալսարանի հայերէն ձեռագիրները, 1964, էջ 479—484:

- 96.—Heck հնապաճառին հայերէն ձեռագիր Աւետարանը, 1965, էջ 221—228:
 97.—Յուցակ Վիեննացի Ավտորիական Ազգացին Մատենադարանի հայերէն ձեռագիրներու, 1965, էջ 361—372 և 483—492:
 98.—Գարթալի Ս. Նշան եկեղեցոյ հայերէն ձեռագիրները, 1966, էջ 321—338:
 99.—Հայոց Կ. Պոլսոյ (Գոմգարուի) Պատրիարքարանի հայերէն ձեռագիրներէն, 1966, էջ 475—488, 1967, 379—384:
 100.—Կ. Պոլսոյ Պետական հնախօսական թանգարանին Մատենադարանին Աւագ Մաշտոց ձեռագիրը, 1967, էջ 43—52:
 101.—Ի Կ. Պոլիս «Թօփգաքք» պալատին կից Ամմետ Գ. սուլթանին անուան Մատենադարանին հայերէն ձեռագիրները, 1967, էջ 183—196:

Դ. Գրախոսություններ

- 102.—Տօքթ. Մ. Սալբի, Ալեականք և խղականք... Աղեքսանդրիա, 1919: 1920, էջ 480:
 103.—Խաչմանեան Յ., Ամերիկահայ հանրագիտակ տարեգիրք, 1925, Պոսթըն, 1925, էջ 93—94:
 104.—Dr. Pözl F. und Dr. Th. Innitzer: Kurzgefasster Kommentar zu den vier heiligen Evangelien... Graz 1922—1925. 1926, էջ 91:
 105.—Dr. Kraft B: Die Evangelienzitate des hl. Irenäus... 1924. 1926, էջ 91—92:
 106.—Dictionnaire d'histoire et de géographie ecclésiastique... 1912—1926. 1926, էջ 284—286:
 107.—Oudenrijn Dr. M. A. Van den, Der Traktat. Յաղագս առաքինութեանց հոգայտն... 1942: 1945, էջ 125—128:
 108.—Թերզեան Մ. վրդ., Զմմառու հայ վանքը, Պէրութ, 1949: 1950, էջ 242—244:
 109.—Երեմեան Արամ, Նոր Զուղայի Ժէ դարու որմանկարչութեան յուշարձանը, Նիւ Եորք, 1942: 1950, էջ 110—112:
 110.—Միրմեան Արտ. արքեպ., Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Երոստայի մասնատր հաւաքումներու, Ա. հատոր, Փարիզ, 1950: 1950, էջ 94—96:
 111.—Պետիկեան Ա. Ա., Գրչանկարներ Պարտիզակ գիւղին, Փարիզ, 1950: 1952, էջ 636—637:
 112.—Թերզեան Մետրոպ վրդ., Յակոբ Դ. Զուղայեցի (1655—1680), Պէրութ, 1956: 1957, էջ 92—94:
 113.—Աթանասեան Խաչիկ վ., Վարք Արքաճառ Պետրոս Ա. Արծիւեան կաթողիկոսի, Պէրութ, 1959: 1959, էջ 572—574:
 114.—Անապան Հ., Հայկական մատենագիտություն, Ե—ԺԷ դդ. հտ. Ա, Երևան, 1959: 1960, էջ 155—158:
 115.—Նալբանդյան Վ. Ա., Թբիլիսի հայ մատենագրության մէջ, Երևան 1958: 1960, էջ 311—316:
 116.—Հարությունյան Հ. Ա., Հայոց տոմար IX—XI դարերում, Երևան, 1959: 1960, էջ 469—470:

- 117.—Հակոբյան Թ. Խ., Երևանի պատմությունը 1801—1879 թթ., Երևան, 1959: 1960, էջ 628—636:
118. Inglislan P. Dr. Vahan, Hundertfünfzig Jahre Mechitharisten in Wien, 1961. 1962, էջ 149—150:
- 119.—Ապոլյանյան Արշակ, Պատմություն հայ գաղթականության... Գ. հատոր, Ա. մաս... Գաֆիլէ, 1961: 1962, էջ 313—316:
- 120.—Գրիգորիս, Քննություն բնութեան մարդոյ և նորին ցարոյ, աշխատասիրությամբ Ա. Ս. Կծոյանի... 1962, Երևան: 1962, էջ 506—508:
- 121.—Մանակյան Համիկ, Հայ աշուղներ ժէ—ժժ դդ., Երևան, 1961: 1963, էջ 151—152:
- 122.—Սրապյան Արմենուհի, Կոստանդին Երզնկացի, Տաղեր, Երևան, 1962: 1963, էջ 313—314:
123. Armenische Handschriften beschrieben von Julius Assfalg und Joseph Molitor, Wiesbaden 1962. 1963, էջ 437—438:
- 124.—Գևորգյան Վ. Պ., Հովասափ Սեբաստացի, Բանաստեղծություններ, Երևան, 1964: 1964, էջ 234:
- 125.—Ղաֆադարյան Կ., Հաղթատ. ճարտարապետական կառուցվածքները և վիմական արձանագրությունները, Երևան, 1963: 1964, էջ 279—280:
- 126.—Պտուկեան Զարեհ Պ., Կիլիկեան Հայաստանի դրամները, Վիեննա, 1963: 1964, էջ 281—282:
127. Das Leben des hl. Maschtotz von seinem Schüler Koriun, übersetzt von P. Dr. V. Inglislan, Düsseldorf, 1963. 1964, էջ 437—438:
- 128.—Հուլյունեան Հ. Յարութիւն և Հաննան Հ. Մատթէոս, Յուշամատեն Խոտորճուրի, Վիեննա, 1964: 1964, էջ 440—442:
- 129.—Նդգարեան Ա. քն., Իրանի Զհարմնալ գաւառը, Թեհրան, 1963: 1964, էջ 567—568:
- 130.—Մուշեղյան Եղգիմե, Հայերեն արձանագրությամբ առարկաներ (պրակ Ա. Հատկանշական ցուցակ թանգարանային ժողովածուների շարքի) Երևան, 1964: 1964, էջ 568—570:
131. Der Nersessian Siraple, Manuscripts in the Freer Gallery of Art... Washington, 1963. 1964, էջ 370:
- 132.—Ագարյան Լ. Ռ., Կիլիկյան մանրանկարչությունը ժԲ—ԺԳ դդ., Երևան, 1964: 1965, էջ 151—154:
- 133.—Հարությունյան Վարագդատ, Անի քաղաքը, միջնադարյան Հայաստանի քաղաքաշինության պատմությունից, Երևան, 1963: 1965, էջ 440—444:
134. Burchard Christoph, Untersuchungen zu Joseph und Aseneth .. Tübingen, 1965. 1966, էջ 250—251:

- 135.—Սիմոնեան Սիմոն, Արևելյան գրականություն, Պեյրոթ, 1965: 1966, էջ 252—254:
- 136.—Աբգարեանց Տիգրան Թ., Նոր Զողայի անգիր գրականություն, Թեհրան, 1966, էջ 570:
- 137.—Ամալյան Հ. Մ., Միջնադարյան բառարանագիտական հուշարձաններ (Ե—ԺԵ դդ.), Երևան, 1966: 1967, էջ 117—120:
- 138.—Սարգիսեան Հ. Բարսեղ—Սարգիսեան Հ. Դրիգոր, Մայր ցուցակ հայերեն ձեռագրաց Մատենադարանին Մխիթարեանց ի Վեներտիկ, հատոր Գ. Մաշտոց-գիրք ձեռնադրութեանց, Վեներտիկ, 1966: 1966, էջ 400—403:
- 138ա.—Դիլոյան Վ. Ա., Լազարյանների հասարակական-քաղաքական գործունեության պատմությունից, Երևան, 1966: 1967, էջ 246—252:
- 139.—Պատմություն հայկական Պոնտոսի, պատմագրեց Յովակիմ Յովակիմյան, Պեյրոթ, 1967: 1967, էջ 404—406:

Ե. Մահախոսականներ և աղակալք

- 140.—Վիեննայի Մխիթարեանց Միաբանությունը Համաշխարհային պատերազմի տարիներուն: 1945, էջ 117—125:
- 141.—Ուսուցչապետ Լևոն Մելիքսեթ-բեկ: 1964, էջ 79—86:
- 142.—Հ. Նդիս վրդ. Փեչիկեան: 1964, էջ 383—388:
- 143.—Հ. Սարգիս վրդ. Բարդուղեան: 1965, էջ 493—496:
- 144.—Հ. Յովհաննէս վրդ. Մըսրեան: 1965, էջ 495—502:
- 145.—Հ. Սրապիւն վրդ. Նդիպեան: 1966, էջ 79—82:

Զ. Թարգմանություններ

- 146.—Լեոնարդո-Բրամանտե—Վիլնովա համեմատական գեղարուեստա-քննության շրջանակին մէջ (Յ. Ստրչիգովսկի): 1919, էջ 36—53. 1920, էջ 232—245 և 467—478:
- 147.—Լեֆանդերը և անոնց Անդրէաս արքեպիսկոպոսը Նազովիցի մէջ (Դոկտ. Զ. Օրերտինսկի, թարգմանչի ծանոթագրություններով): 1962, էջ 85—100, 263—289, 460—480, 1965, էջ 83—102, 279—294:
- 148.—Հայերը և Խաչակիրները (ըստ Գրուսի): 1966, էջ 81—92 և 195—216:

ՍՈՒՐԵՆ Ե. ՔՈՒԱՆԶՅԱՆ
(Պատմական գիտությունների թեկնածու)

